

**Գրավով չապահովված խնդրահարույց մանրածախ վարկերի և վարկային գծերի գծով կուտակված տույժերի/տուգանքների ներման պայմաններ<sup>1</sup>**

1. Հիմնական պայմաններ		
		Հաճախորդի կողմից վճարման ենթակա գումար
1.1	Վարկի մայր գումարի գծով անհրաժեշտ մարում <sup>1</sup>	Ամբողջությամբ
1.2	Վարկի մայր գումարի գծով հաշվարկված տոկոսագումարների գծով մարում (այդ թվում նաև ժամկետանց տոկոսագումար)	Որոշման կայացման ամսաթվի դրությամբ ամբողջությամբ
1.3	Ժամկետանց վարկի դիմաց հաշվարկված տոկոսագումարների գծով մարում	Որոշման կայացման ամսաթվի դրությամբ նվազագույնը 20% **
1.4	Ժամկետանց տոկոսագումարի դիմաց հաշվարկված տույժերի գծով մարում	Որոշման կայացման ամսաթվի դրությամբ նվազագույնը 20% **
1.5	Դեբիտորական պարտքերի մարում (այդ թվում նաև վարկի կամ հաշվի գծով առաջացած միջնորդավճարներ, սպասարկման վճարներ և այլն)	Ամբողջությամբ
1.6	Բանկի կողմից վարկի հետստացման գործընթացին ուղղված ծախսեր՝ այդ թվում	
	Արտադատական	Ամբողջությամբ
	Դատական	Ամբողջությամբ

<sup>1</sup>Սույն պայմանները տարածվում են նաև Բանկում ներկայումս և նախկինում գործող գրավով չապահովված վարկատեսակների վրա, ինչպես նաև այն գրավով ապահովված վարկատեսակների վրա, որոնց գրավը իրացվել է, բայց իրացումից ստացված գումարը չի բավարարել Բանկի հանդեպ առկա ամբողջ պարտավորության մարման համար: Գրավի իրացումից հետո մնացորդների, ինչպես նաև վարկառուի մահացած լինելու դեպքում կիրառելի է միայն 1.1 կետը:

Պայմանները կիրառելի չեն արդեն վերակառուցված/վերաֆինանսավորված վարկերի նկատմամբ: Պարտավորությունների ներում չի իրականացվում սնանկության վարույթում գտնվող վարկերի դեպքում:

Ներման ենթակա գումարը 5,000,000 ՀՀ դրամը գերազանցելու դեպքում Բանկի կողմից կարող են կիրառվել սույն պայմաններից տարբեր պայմաններ:

\*\* Կիրառելի չէ մինչև 31.05.2018թ. արտահաշվեկշիռ դուրս գրված վարկերի համար: